Հավելված
ՀՀ կառավարության 2026 թվականի
-ի N -Ն որոշման

«Հավելված N 1
ՀՀ կառավարության 2014 թվականի
նոյեմբերի 27-ի N 1407-Ն որոշման

«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը (այսուհետ՝ Համալսարան) հիմնադրի որոշմամբ հիմնադրված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է:
2.Համալսարանը «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության (պետական գրանցման համարը՝ 273.210.03230) իրավահաջորդն է (փոխանցման ակտին համապատասխան):
3.Համալսարանն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, Քաղաքացիական օրենսգրքին, «Բարձրագույն կրթության և գիտության մասին», «Հիմնադրամների մասին», «Հանրակրթության մասին», «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին», «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքներին, այլ իրավական ակտերին և սույն կանոնադրությանը համապատասխան:
4.Համալսարանի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության: Հայաստանի Հանրապետության անունից հանդես եկող պետական կառավարման լիազոր մարմինը Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն է (այսուհետ՝ Լիազոր մարմին):
5. Համալսարանի անվանումն է՝
1) հայերեն լրիվ՝ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ.
2) հայերեն կրճատ՝ «ԵՊԲՀ» հիմնադրամ.

3) ռուսերեն լրիվ՝ «Ереванский государственный медицинский университет имени Мхитара Гераци» фонд.
4) ռուսերեն կրճատ՝ «ЕГМУ» фонд.
5) անգլերեն լրիվ՝ «Yerevan State Medical University after Mkhitar Heratsi» Foundation.
6) անգլերեն կրճատ՝ «YSMU» Foundation:
6. Համալսարանն ունի խորհրդանիշ, որի պատկերը և նկարագրությունը սահմանված են սույն կանոնադրությամբ:
7. Համալսարանի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան քաղաք, 0025, Կորյունի 2:

II. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

8. Համալսարանն իրավաբանական անձ է և ստեղծված է համարվում պետական գրանցման պահից, գործում է անժամկետ:
9. Համալսարանն օրենքով սահմանված կարգով կարող է ստեղծել հիմնարկներ, ներկայացուցչություններ, մասնաճյուղեր և լինել տնտեսական ընկերությունների հիմնադիր և մասնակից:
10. Համալսարանն ունի առանձնացված գույք, որը հաշվառվում է ինքնուրույն հաշվեկշռում, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
11. Համալսարանն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով բացելու բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում՝ Հայաստանի Հանրապետության դրամով և (կամ) արտարժույթով:
12. Համալսարանն իր գործունեության ընթացքում ստացված ամբողջ եկամուտը պետք է օգտագործվի սեփական կանոնադրական նպատակների իրականացման համար:
13. Համալսարանն իր կանոնադրությանը համապատասխան՝
1) օգտագործում է հիմնադրի կողմից Համալսարանին տրամադրված գույքը.
2) տնօրինում, օգտագործում և տիրապետում է սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:
14. Համալսարանը կարող է ունենալ իր անվանումը և խորհրդանիշը պարունակող կնիք, դրոշմներ, ձևաթղթեր, ինչպես նաև մեդալ, բժշկի երդում և անհատականացնող այլ միջոցներ:
15.Համալսարանի իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով նախատեսված դեպքերում:
16. Հիմնադիրը պատասխանատվություն չի կրում Համալսարանի պարտավորությունների համար, իսկ Համալսարանը պատասխանատվություն չի կրում իր հիմնադրի պարտավորությունների համար: Համալսարանն իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում իրեն պատկանող գույքով:

III. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ, ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ,ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

17.Համալսարանը հանրային բուհ է, որի հիմնական նպատակներն են բարձրագույն կրթության, ներառյալ հետավարտական լրացուցիչ ուսումնառության, նեղ և լրացուցիչ մասնագիտացման, գիտատեխնոլոգիական գործունեության:

18. Համալսարանի գործառույթներն են՝

1) բարձրագույն կրթության տարբեր մակարդակներում ուսումնական գործընթացի կազմակերպումը և որակյալ, հետազոտության վրա հիմնված կրթության իրականացումը.

2) Համալսարանի առաքելությանը հավատարիմ և դրան անշեղորեն ուղղված գործունեության կազմակերպումը.

3) յուրաքանչյուր մակարդակում կրթական ծրագրերի' որակավորումների ազգային շրջանակով և, առկայության դեպքում, ոլորտային որակավորումների շրջանակներով սահմանված նկարագրերին և այլ պահանջներին ուսումնառության վերջնարդյունքների համապատասխանության ապահովումը.

4) բարձրագույն կրթության որակի շարունակական բարելավումը, դասավանդման, ուսումնառության և գնահատման արդիական մեթոդների ներդրումը և դրանց բազմազանության ապահովումը.

5) կրթական գործընթացի շարունակականության և թափանցիկության ապահովումը.

6) բարձրագույն կրթության ժամանակակից, մրցունակ և միջազգայնորեն համադրելի կրթական ծրագրերի մշակումը՝ պետության ու աշխատաշուկայի կարիքների գնահատմամբ, ինչպես նաև ուսանողների ներգրավմամբ.

7) քաղաքացիական գիտակցության, պատասխանատվության, ազգային և համամարդկային արժեքների արմատավորումը.

8) բարձրագույն կրթության միջազգայնացումը.

9) բարձրագույն կրթության համար պետական և մասնավոր միջոցների ներգրավումը.

10) նոր գիտելիքի ստեղծումը, ընդլայնումը և տարածումը.

11) գիտական գիտատեխնոլոգիական գործունեության միջազգայնացումը.

12) գիտական գիտատեխնոլոգիական գործունեության համար պետական և մասնավոր միջոցների ներգրավումը.

13) Հայաստանի Հանրապետության տնտեսության և պետական այլ մարմինների կամ կազմակերպությունների կարիքների համար հետազոտությունների և փորձարարական մշակումների իրականացումը.

14) սույն կանոնադրությամբ սահմանված ձեռնարկատիրական գործունեության տեսակներով զբաղվելը, այդ թվում' իր կողմից ստեղծված գիտելիքի առևտրայնացումը, և ստացված եկամուտի տնօրինումը' կանոնադրությամբ և առաքելությամբ սահմանված նպատակների համար.

15) Հանրակրթության ու մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում գործունեության իրականացումը:

19.Համալսարանն ունի հետևյալ իրավասությունները՝

1) առողջապահության համակարգի մասնագետների պատրաստում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության զինված ուժերի համար ռազմաբժշկական բարձրագույն կրթությամբ սպաների պատրաստում.
2) առողջապահության բնագավառի բարձրագույն կրթական ծրագրերի իրականացում, ինչպես հետավարտական լրացուցիչ ուսումնառության, նեղ և լրացուցիչ մասնագիտացման կրթական, ինչպես նաև շարունակական մասնագիտական զարգացման ծրագրերի իրականացում.
3) մասնագիտական կրթության և ուսուցման ծրագրերի իրականացում.
4) հանրակրթական ծրագրերի իրականացում.
5) ակադեմիական և գիտական կադրերի պատրաստում, մասնագիտական որակավորման բարձրացման կազմակերպում և իրականացում.
6) բնակչության բժշկական օգնության և սպասարկման կազմակերպում և իրականացում.
7) փորձագիտական գործունեության կազմակերպում և իրականացում.
8) առողջապահության բնագավառում գիտատեխնոլոգիական գործունեության կազմակերպում և իրականացում.
9) կրթության, գիտության, տեխնոլոգիաների ոլորտների զարգացմանը հասարակության առաջընթացին ու նորարարական ներուժի ձևավորմանը նպաստում:
20. Համալսարանն իր իրավասությունների իրականացման նպատակով՝
1) ընդունելության ընդհանրական կանոններին համապատասխան՝ կազմակերպում և իրականացնում է ընդունելության գործընթացը, ներառյալ՝ օտարերկրյա քաղաքացիների՝ ըստ Համալսարանի կրթական մակարդակների և կրթական ծրագրերի.
2) ապահովում է ֆիզիկական միջավայրի, տեղեկատվության և հաղորդակցության մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց կրթության՝ մյուսների հետ հավասար հիմունքներով կազմակերպման համար.
3) մշակում և հրատարակում է ուսումնամեթոդական նյութեր ու գրականություն.
4) կազմակերպում է ուսումնական գործընթացը՝ ընտրելով կրթական ծրագրով նախատեսված բոլոր վերջնարդյունքների ապահովմանը նպաստող ուսուցման անհրաժեշտ մեթոդները և տեխնոլոգիաները, ինչպես նաև զարգացնում է ուսանողների հետազոտական և ակադեմիական գրագրության հմտությունները.
5) սահմանում է ուսանողների կողմից կրեդիտների կուտակման, փոխանցման և փոխճանաչման ներբուհական ընթացակարգը, ուսումնառության վերջնարդյունքների գնահատման, ամփոփիչ ատեստավորման ձևերն ու պարբերականությունը.
6) կատարում է ուսանողների ուսումնառության ընդհատումը (ազատումը, հեռացումը, դադարեցումը), տեղափոխումը և ուսանողական իրավունքների վերականգնումը.
7) մշակում և հաստատում է ուսումնական, գիտական, վարչական, ֆինանսական և տնտեսական ու հարակից գործունեություն իրականացնող աշխատողների ընտրության և նշանակման կարգերը.
8) կազմակերպում է ակադեմիական, գիտական և կառավարման (վարչական) գործառույթներ իրականացնող կազմի մասնագիտական զարգացմանն ուղղված դասընթացներ և ատեստավորման գործընթաց.
9) ներառականության ապահովման նպատակով մատուցում է աջակցության

ծառայություններ, այդ թվում՝ մեթոդական, հոգեբանական, հավելյալ կրթական ծրագրերը, ինչպես նաև անհատական ուսուցման պլանի կազմում, որոնք ցուցաբերվում են ուսանողին և ակադեմիական կազմին.

10) ինքնուրույն որոշում է ֆինանսական միջոցների օգտագործման ուղղությունները, կազմում և հաստատում է տարեկան բյուջեն և դրան համապատասխան՝ կատարում ծախսեր.

11) իրականացնում է գիտական գիտատեխնոլոգիական և նորարարական գործունեություն, ինչպես նաև ստացված արդյունքների առևտրայնացման ուղղությամբ աշխատանքներ.

12) մատուցում է վճարովի կրթական և հետազոտական այլ ծառայություններ, ինչպես նաև իրականացնում է օրենքով չարգելված և իր անմիջական գործունեությանն առնչվող տնտեսական և ձեռնարկատիրական գործունեություն.

13) ըստ կրթական ծրագրերի՝ սահմանում է ուսման վարձերի չափերը.

14) իր, ինչպես նաև իր աշխատողների մտավոր սեփականության իրացման և տարածման նպատակով ստեղծում է ընկերություններ, հիմնարկներ, մասնաճյուղեր և կառուցվածքային միավորներ, այդ թվում՝ օտարերկրյա պետություններում, ինչպես նաև այլ կրթական ծրագրեր իրականացնող կառուցվածքային միավորներ.

15) սահմանված կարգով տնօրինում է իրեն տրամադրված գույքը և այդ գույքի վարձակալությունից ստացված եկամուտները.

16) շարունակական ծրագրերի մասով տնօրինում և օգտագործում է պետական բյուջեից հատկացված ու տվյալ տարում չօգտագործված ֆինանսական միջոցները, եթե օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ.

17) խրախուսում է ուսանողների և աշխատողների մարզական ակտիվությունը, այդ թվում սույն կանոնադրության և օրենսդրության համապատասխան աջակցելով ուսանողական մարզական ակումբների գործունեությանը.

18) սահմանում և շնորհում է Համալսարանի պատվավոր կոչումներ, մրցանակներ, անվանական կրթաթոշակներ, պարգևատրում Համալսարանի մեդալով.

19) իրականացնում է հրատարակչական գործունեություն.

20) իր կողմից կնքված պայմանագրերի ու համաձայնագրերի հիման վրա իրականացնում է երկկողմանի ու բազմակողմանի ուղղակի կապեր հանրապետության և օտարերկրյա համալսարանների, գիտական կազմակերպությունների, պետական մարմինների, այլ կազմակերպությունների և ֆիզիկական անձանց հետ, կատարելու տարատեսակ աշխատանքներ (մասնագետների պատրաստում, վերապատրաստում, շարունակական մասնագիտական զարգացում և որակավորման բարձրացում՝ ուսուցման բոլոր ձևերով, ուսանողների ուսուցում, մասնագետների փոխանակում, գիտական, մշակութային, լուսավորչական և այլ գործունեություն, գիտական խորհրդակցությունների ու արշավախմբերի կազմակերպում և այլն), օտարերկրյա պետություններում ստեղծելու ստորաբաժանումներ և այլն.

21) իրականացնում է իր գործունեության ընթացքում առաջացող վտանգավոր թափոնների վերամշակում, վնասազերծում, պահպանում, փոխադրում և տեղադրում՝ բացառապես սեփական կարիքների համար.

22) ներգրավում է այլ անձանց կողմից տրամադրվող միջոցներ՝ Համալսարանի հիմնական և ձեռնարկատիրական գործունեության ընդլայնման նպատակով.

23) իրականացնում է օրենքներով և սույն կանոնադրությամբ չարգելված այլ գործունեություն:
21.Համալսարանը կարող է օրենսդրությանը համապատասխան զբաղվել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակներով՝
1) բարձրագույն կրթություն, ներառյալ հետավարտական ուսումնառության, նեղ և լրացուցիչ մասնագիտացման, ինչպես նաև մասնագիտական կրթության և ուսուցման, հանրակրթության կազմակերպում և իրականացում.
2) օտարերկրյա դիմորդների ու սովորողների նախապատրաստական և բոլոր աստիճանների կրթության կազմակերպում և իրականացում.
3) գիտական և ճարտարագիտական կադրերի պատրաստում, վերապատրաստում, որակավորման բարձրացում.
4) ակադեմիական կազմի որակավորման բարձրացման կազմակերպում և իրականացում, առողջապահության բնագավառի մասնագետների պատրաստում և շարունակական մասնագիտական զարգացման կազմակերպում և իրականացում.
5) գիտատեխնոլոգիական աշխատանքների կազմակերպում և իրականացում.
6) միջազգային ուսումնական և գիտատեխնոլոգիական համագործակցության կազմակերպում.
7) բնակչությանը բժշկական օգնության և սպասարկման կազմակերպում և իրականացում.
9) փորձագիտական գործունեության կազմակերպում.
10) կլինիկական փորձարկումների, կենսաբժշկական հետազոտությունների իրականացում.
11) հրատարակչական գործունեություն և արտադրանքի իրացում.
12) սննդի սպասարկման կազմակերպում և իրականացում.
13) ոչ ֆորմալ կրթության ձևերի կազմակերպում և իրականացում.
14) հանրակացարանաբնակ ուսանողների կենցաղի կազմակերպում և սպասարկում.
15) ուսումնական բազաներում և առողջարաններում հանգստի կազմակերպում.
16) մշակութային գործունեության իրականացում.
17) էլեկտրական և ջերմային համակցված արտադրության կայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրություն.
18) դեղերի արտադրություն.
19) դեղատնային գործունեություն.
20) առևտրաարտադրական գործունեություն.
21) միջոցառումների, այդ թվում՝ սեմինարների, գիտաժողովների, կոնֆերանսների, կազմակերպում և իրականացում.
32) տեխնիկական միջոցներով պահպանման ծառայությունների իրականացում:
22. Համալսարանը պարտավոր է՝
1) գործել Սահմանադրությանը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, միջազգային իրավունքի նորմերին և սկզբունքներին, ինչպես նաև իր կանոնադրությանը համապատասխան.
2) գրանցված լինել բարձրագույն կրթության և գիտության կառավարման տեղեկատվական համակարգում.
3) երաշխավորել իր ինստիտուցիոնալ կարողությունների և կրթական ծրագրերի որակը՝ սահմանված պարբերականությամբ անցնելով ինստիտուցիոնալ և ծրագրային

հավատարմագրում.
4) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով և ժամկետներում հրապարակել հաշվետվություններ, ծրագրեր, փաստաթղթեր, տեղեկատվություններ.
5) օրենքով սահմանված կարգով վարել հաշվապահական հաշվառում և գործավարություն.
6) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով տեղեկատվություն ու հաշվետվություններ ներկայացնել պետական մարմիններին.
7) ապահովել սույն կետում նշված հաշվետվություններին ծանոթանալու մատչելիությունը.
8) իրականացնել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ:
23.Համալսարանում արգելվում է քաղաքական, կուսակցական, կրոնական գործունեություն և քարոզչություն իրականացնելը, այդ թվում՝ քաղաքական, կուսակցական, կրոնական գործունեություն կամ քարոզչություն իրականացնելու նպատակով Համալսարանի ֆինանսական, տեղեկատվական, նյութական միջոցները, տարածքները, տարբերանշանները, մարդկային ռեսուրսները օգտագործելը, ինչպես նաև քաղաքական, կուսակցական, կրոնական քարոզչություն կամ գործունեություն իրականացնելիս Համալսարանի անունից հանդես գալը:

IV.ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

24.Համալսարանն իր գործունեությունն իրականացնում է ինքնակառավարման իրավունքի իրացման միջոցով՝ բուհական ինքնավարության, ակադեմիական և հետազոտությունների ազատության, կոլեգիալության, մասնակցայնության սկզբունքներով՝ պահպանելով հաշվետվողականության պահանջներն ու որոշումների կայացման թափանցիկությունը:
25. Համալսարանը Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան, ունի՝
1) ակադեմիական գործունեության ինքնավարություն՝ իր կրթական ու գիտական գործառույթներն ինքնուրույն սահմանելու, կազմակերպելու, իրականացնելու և կառավարելու իրավասություն.
2) կազմակերպական գործունեության ինքնավարություն՝ իր կառուցվածքը,կառուցվածքային միավորներն ինքնուրույն սահմանելու, օրենքով սահմանված կարգով կառավարման և այլ մարմինները ձևավորելու, իրավաբանական անձ ստեղծելու, ինչպես նաև ներքին կանոնակարգերը և ընթացակարգերն ինքնուրույն հաստատելու իրավասություն.
3) մարդկային ռեսուրսների կառավարման ինքնավարություն՝ իր վարչական, կազմակերպական, հայեցողական, ակադեմիական, գիտական և ճարտարագիտատեխնիկական, ինչպես նաև օժանդակ և այլ կազմի աշխատողների ընտրության, նշանակման, առաջխաղացման և ազատման գործառույթներն ինքնուրույն սահմանելու, կազմակերպելու և կառավարելու իրավասություն.
4) ֆինանսական ռեսուրսների կառավարման ինքնավարություն՝ ինքնուրույն իր բյուջեն ձևավորելու, ֆինանսական և այլ միջոցներ կառավարելու, եկամուտները ձևավորելու և ծախսեր կատարելու իրավասություն.

5) «Գնումների մասին» օրենքով Կառավարությանը վերապահված լիազորությունները հոգաբարձուների խորհրդի կողմից իրականացնելու լիազորություն:
26.Համալսարանն իր պաշտոնական կայքում՝
1) հրապարակում է՝ գործող կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների մասին տեղեկատվությունը.
2) կրթական ծառայությունների մատուցման ռազմավարական և տարեկան ծրագրերը, ակադեմիական բարեվարքության կանոնակարգը, ինչպես նաև իր գործունեությունը կանոնակարգող ներքին իրավական ակտեր և այլ իրավական ակտեր:
3) յուրաքանչյուր տարի՝ մինչև տվյալ տարվա մայիսի 1-ը հրապարակում է նախորդ տարվա ընթացքում Համալսարանի ռազմավարական ծրագրի իրականացման արդյունքների մասին հաշվետվությունը:
27. Համալսարանն երաշխավորում է իր ֆինանսական թափանցիկությունը, յուրաքանչյուր տարի՝ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում հրապարակելով նախորդ տարվա ֆինանսավորման աղբյուրների, ծախսերի և մնացորդների մասին տեղեկատվությունը և ֆինանսական գործունեության վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը:

V. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ

28. Համալսարանի շահառուները՝ կրթական, գիտական, հետազոտական, առողջապահության, ուսումնաարտադրական և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ բնագավառներին առնչություն ունեցող ֆիզիկական և իրավաբանական անձինք են:

VI. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

30. Համալսարանն իր գործունեությունն իրականացնում է իր մարմինների միջոցով:
31. Համալսարանի մարմիններն են՝
1) կառավարման մարմինները՝
ա.հոգաբարձուների խորհուրդը.
բ. ակադեմիական խորհուրդը.
գ. Համալսարանի գործադիր մարմինը՝ ռեկտորը (այսուհետ՝ ռեկտոր):
2) այլ մարմիններ՝
ա. ուսումնամեթոդական խորհուրդը.
բ.ընտրական անկախ մարմինը.
գ.ուսանողական ներկայացուցչական մարմինը.
դ. ֆակուլտետային (դպրոցի, քոլեջի) խորհուրդները.
ե. էթիկայի և իրավունքի պաշտպանության բուհական գրասենյակը.
զ. ռեկտորատը:

32. Համալսարանում կարող են ստեղծվել սույն կանոնադրությամբ չնախատեսված, սակայն Համալսարանի գործունեությանն ու նպատակին համապատասխան՝ օրենսդրությամբ չարգելված այլ մարմիններ:

VII.ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

33.Համալսարանի հոգաբարձուների խորհուրդը Համալսարանի կառավարման մշտապես գործող բարձրագույն մարմինն է՝ բաղկացած քսան անդամից:
34.Հոգաբարձուների խորհուրդը ձևավորվում է Համալսարանի ակադեմիական կազմից, ուսանողության ներկայացուցիչներից, ինչպես նաև հիմնադրի և Լիազոր մարմնի ներկայացուցիչներից:
35.Համալսարանի հոգաբարձուների խորհրդի անդամներից հինգին առաջադրում է Լիազոր մարմինը իսկ հինգին' հիմնադիրը: Հոգաբարձուների խորհրդի անդամներից տասին առաջադրում է Համալսարանը՝ ընդ որում, հինգին՝ ակադեմիական և գիտական ստորաբաժանումներից՝ հնարավորինս ապահովելով բուհի տարբեր ակադեմիական միավորների ներկայացվածությունը, հինգին՝ ուսանողական ներկայացուցչական մարմնի ներկայացուցիչներից:
36. Հոգաբարձուների խորհրդի ակադեմիական կազմից և ուսանողական ներկայացուցչական մարմնից թեկնածուների առաջադրման և ընտրության կարգը հաստատում է հոգաբարձուների խորհուրդը:
37. Հոգաբարձուների խորհրդի լիազորությունների ժամկետը հինգ տարի է, բացառությամբ օրենքով սահմանված հիմքերով հոգաբարձուների խորհրդի լիազորությունների ավելի վաղ դադարեցման դեպքերի:
38.Հոգաբարձուների խորհրդի լիազորությունների ժամկետը լրանալուց առնվազն երկու ամիս առաջ Համալսարանի ռեկտորը տեղեկացնում է տվյալ անդամին առաջադրող մարմնին, որն իր սահմանած կարգով 30 աշխատանքային օրվա ընթացքում Լիազոր մարմնին է ներկայացնում նոր անդամի թեկնածությունը:
39. Սույն կանոնադրության 49-րդ կետերով նախատեսված հիմքն առաջանալուց հետո մեկամսյա ժամկետում Համալսարանի ռեկտորը տեղեկացնում է տվյալ անդամին առաջադրող մարմնին, որն իր սահմանած կարգով 30 աշխատանքային օրվա ընթացքում Լիազոր մարմնին է ներկայացնում նոր անդամի թեկնածությունը:
40.Հոգաբարձուների խորհրդի անվանական կազմը հաստատում է Հայաստանի Հանրապետության վարչապետը՝ Լիազոր մարմնի ներկայացմամբ:
41.Հոգաբարձուների խորհրդի իրավասությանն են պատկանում'
1) ռեկտորի ներկայացմամբ Համալսարանի տարեկան բյուջեի ու դրա փոփոխությունների, 50.000.000 դրամի կամ դրան համարժեք այլ արտարժույթի սահմանաչափը գերազանցող պայմանագրերի, տարեկան ֆինանսական հաշվետվությունների ու Համալսարանի գործունեության մասին տարեկան հաշվետվությունների և տարեկան հաշվեկշռի հաստատումը.
2) Համալսարանի ռազմավարական ծրագրի հաստատումը, որը ներկայացնում է ռեկտորը'

ակադեմիական խորհրդի դրական երաշխավորությամբ և ակադեմիական կազմի ու ուսանողության առաջարկների ամփոփաթերթով.
3)Համալսարանի գործունեության, այդ թվում՝ ֆինանսատնտեսական գործունեության վերահսկողությունը.
4)ակադեմիական խորհրդի առաջարկով հիմնադրին Համալսարանի կանոնադրության մեջ փոփոխությունների առաջարկ ներկայացնելը.
5)ակադեմիական խորհրդի դրական եզրակացությամբ ռեկտորի մրցութային ընտրության կազմակերպման ընթացակարգի հաստատումը.
6)ռեկտորի ընտրությունը, պաշտոնում նշանակումը և պաշտոնից ազատումը' թեկնածուների վերաբերյալ ակադեմիական խորհրդի եզրակացության քննարկմամբ.
7)Համալսարանի էթիկայի, բարեվարքության և վարվեցողության ներքին կանոնակարգի հաստատումը.
8)ռեկտորի, իսկ ակադեմիական միավորների փոփոխության դեպքում, ակադեմիական խորհրդի առաջարկների հիման վրա, Համալսարանի կառուցվածքի, հաստիքակազմերի, (պաշտոնների ցանկեր), դրանց ներկայացվող պահանջների, հաստիքացուցակի, հաստատումը, դրանց մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը.
9)ռեկտորի ներկայացմամբ' Համալսարանի գործունեության տարեկան հաշվետվության քննարկումը և գնահատումը, այդ թվում' համադրելով գործող ռազմավարության հետ.
10)ֆինանսական աուդիտ իրականացնող իրավաբանական անձի ընտրության տեխնիկական բնութագրի և ընտրության արդյունքների հաստատումը.
11) Ուսանողական ինքնակառավարման մարմիններին հատկացվող ընդհանուր ֆինանսավորման չափը, գույքի և այլ ռեսուրսների (այդ թվում' հավելյալ) տրամադրման դեպքերի, նվազագույն չափի, դրանց օգտագործման պայմանները և հաշվետվողականության կարգի սահմանումը;
12) էթիկայի և իրավունքի պաշտպանության գրասենյակի կառուցվածքի, բյուջեի, ձևավորման և կառավարման կարգի, ինչպես նաև լիազորությունների և գործառույթների իրականացման ընթացակարգերի հաստատումը.
13) օրենքին համապատասխան Համալսարանի կրթական ծրագրերով ուսման վճարների չափի հաստատումը.
14) աշխատողների կամ ուսանողների մշակումների կամ հեղինակային իրավունքի հիման վրա և Համալսարանի մասնակցությամբ կազմակերպությունների հիմնադրման առաջարկների քննարկումը և դրանցում Համալսարանի մասնակցության սահմանաչափի հաստատումը.
15) Համալսարանի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի, ներառյալ նախագահի և քարտուղարի ընտրության կարգի հաստատումը.
16) Ռեկտորի ընտրության մրցույթի անցկացման կարգի հաստատումը.
17) օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ՝ այդ թվում Համալսարանի այլ մարմիններին չվերապահված իրավասությունների իրականացումը:
42.Հոգաբարձուների խորհուրդը կարող է ունենալ ոլորտային հանձնաժողովներ, որոնց ստեղծման և գործունեության կարգը սահմանում է հոգաբարձուների խորհուրդը:
43.Համալսարանի հոգաբարձուների խորհրդի նախագահին ընտրում են հոգաբարձուների

խորհրդի անդամները՝ խորհրդի անդամների կազմից, բացառությամբ ակադեմիական կազմի և ուսանողության ներկայացուցիչների:
44.Հոգաբարձուների խորհրդի նախագահը՝
1) հրավիրում է հոգաբարձուների խորհրդի նիստերը և նախագահում դրանք.
2) ստորագրում է հոգաբարձուների խորհրդի որոշումները.
3) կազմակերպում է հոգաբարձուների խորհրդի նիստերի արձանագրության վարումը՝ քարտուղարի միջոցով.
4) հոգաբարձուների խորհրդի քննարկմանն է ներկայացնում հոգաբարձուների խորհրդի անդամների լիազորությունների դադարեցման մասին որոշման նախագիծը.
5) Համալսարանի անունից ռեկտորի հետ կնքում է աշխատանքային պայմանագիր:
45.Հոգաբարձուների խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները հոգաբարձուների խորհրդի որոշմամբ կատարում է հոգաբարձուների խորհրդի անդամներից մեկը:
46.Հոգաբարձուների խորհրդի անդամներն իրավունք ունեն՝
1) ներկայացնելու առաջարկություններ հոգաբարձուների խորհրդի նիստերի օրակարգի և քննարկվող հարցերի վերաբերյալ.
2) նախապատրաստելու և հոգաբարձուների խորհրդի քննարկմանը ներկայացնելու հարցեր, առաջարկություններ, որոշումների նախագծեր.
3) ստանալու տեղեկություններ համալսարանի գործունեությանը վերաբերող ցանկացած հարցի վերաբերյալ.
4) օրենքով նախատեսված այլ իրավունքներ:
47.Հոգաբարձուների խորհրդի անդամները պարտավոր են՝
1) մասնակցել հոգաբարձուների խորհրդի նիստերին.
2) իրենց պարտականությունների կատարման ընթացքում գործել՝ ելնելով Համալսարանի շահերից.
3) իրականացնել օրենքով նախատեսված այլ պարտականություններ:
48. Հոգաբարձուների խորհրդի անդամ չի կարող լինել այն անձը, որը՝
1) դատապարտվել է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի հիման վրա, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ կամ
2) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ կամ
3) Համալսարանում զբաղեցնում է վարչական պաշտոն.
4) Համալսարանի ակադեմիական խորհրդի անդամ է կամ
5) Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանման ղեկավար է կամ
6) ունի օրենքով սահմանված այլ սահմանափակում:
49. Հոգաբարձուների խորհրդի անդամի լիազորությունը դադարեցվում է Լիազոր մարմնի միջնորդությամբ՝ հիմնադիր մարմնի ղեկավարի որոշմամբ՝
1) երեք անընդմեջ նիստերին անհարգելի չմասնակցելու կամ վերջին տասը նիստերից առնվազն հինգին չմասնակցելու պատճառով.
2) կամ իր պարտականությունները պատշաճ չկատարելու դեպքում՝ հոգաբարձուների խորհրդի մնացած անդամների ձայների առնվազն 3/4-ով կայացված որոշման հիման վրա.

5) կամ էթիկայի և իրավունքի պաշտպանության բուհական գրասենյակի կողմից էթիկայի խախտումը հաստատող եզրակացության հիման վրա.
6) կամ հոգաբարձուների խորհրդի անդամներին ներկայացվող պահանջներից որևէ մեկին չբավարարելու պատճառով.
7) նրա մահվան դեպքում.
8*) ուսանողի կարգավիճակը (եթե ներկայացվել է ուսանողության կողմից) կորցնելու դեպքում.*
9) «Հիմնադրամների մասին» օրենքով նախատեսված այլ դեպքերում:
50.Նշանակումից հետո՝ հոգաբարձուների խորհրդի անդամը հոգաբարձուների խորհրդի առաջիկա նիստի ժամանակ գրավոր կարգով ստորագրում է Համալսարանի առաքելությանը և շահերին անվերապահորեն և իր կարողությունների ամբողջ ներուժով ծառայելու մասին հանրային հայտարարություն, որը պահվում է հոգաբարձուների խորհրդի քարտուղարությունում:
51.Հոգաբարձուների խորհրդի նախագահը և մյուս անդամները չեն համարվում հիմնադրամում պաշտոն զբաղեցնող անձ և իրենց պարտականությունները կատարում են առանց վարձատրության՝ հասարակական հիմունքներով:
52.Հոգաբարձուների խորհուրդն ունի Համալսարանում տեղակայված և Համալսարանի բյուջեից վարձատրվող մինչև երեք աշխատող ունեցող քարտուղարություն, որը վարում է հոգաբարձուների խորհրդի գործավարությունը, կազմակերպում է նիստերի անցկացումը: Քարտուղարության ղեկավարը հանդիսանում է հոգաբարձուների խորհրդի քարտուղարը, որին ընտրում են մինչև հինգ տարի ժամկետով հոգաբարձուների խորհրդի առաջին նիստի ժամանակ:
53.Հոգաբարձուների խորհրդի որոշումները և արձանագրությունները հրապարակվում են Համալսարանի կայքում:

VIII.ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

54.Ակադեմիական խորհուրդը՝ Համալսարանի ուսումնամեթոդական և գիտատեխնոլոգիական գործունեության կառավարման մարմինն է, որի իրավասությանն են վերապահված Համալսարանի ուսումնամեթոդական, գիտատեխնոլոգիական և նորարարական գործունեությանն առնչվող որոշումների ընդունումը:
55.Ակադեմիական խորհուրդը ձևավորվում և գործում է հինգ տարի ժամկետով, օրենքին և սույն կանոնադրությանը համապատասխան: Ակադեմիական խորհրդի աշխատակարգը հաստատվում է ակադեմիական խորհրդի կողմից, իսկ ընդունած որոշումները հասանելի են Համալսարանի ակադեմիական կազմի համար և տեղադրվում են Համալսարանի պաշտոնական կայքում:
56.Ակադեմիական խորհուրդն ունի 80 անդամ:
57.Ակադեմիական խորհրդի ընդհանուր թվի՝
1) 16 անդամներն են՝ ռեկտորը, պրոռեկտորները, դեկանները (պետ), ուսումնամեթոդական վարչության պետը, գիտության վարչության պետը, կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնի ղեկավարը, մասնագիտական և շարունակական կրթության կենտրոնի ղեկավարը.

2) 32 անդամ ներգրավվում են Համալսարանի ակադեմիական կազմի ավագ պաշտոններ զբաղեցնող հիմնական աշխատող հանդիսացող ներկայացուցիչները, 24 անդամ՝ միջին ակադեմիական հիմնական աշխատող հանդիսացող ներկայացուցիչներից.
3) 8 անդամ ներգրավվում է ուսանողական համակազմի բարձր առաջադիմություն ունեցող ներկայացուցիչներից:
58.Համալսարանի ակադեմիական խորհրդի նիստերը նախագահում է ռեկտորը, իսկ նրա բացակայության դեպքում, նրա հանձնարարությամբ պրոռեկտորներից մեկը:
59.Համալսարանի ակադեմիական խորհրդի գործավարությունն իրականացնում է քարտուղարը, որն ընտրվում է ակադեմիական խորհրդի կազմից:
60.Ակադեմիական խորհրդի իրավասություններն են՝
1) կրթական գործընթացի կազմակերպման հարցերի վերաբերյալ ընդհանուր որոշումների կայացումը.
2) կրթական ծրագրերի, դրանց նկարագրերի հաստատումը, դրանց ֆինանսավորման վերաբերյալ ռեկտորին առաջարկություն ներկայացնելը.
3) որակի ներքին ապահովման քաղաքականության և ընթացակարգերի հաստատումը և դրա իրականացման վերահսկողությունը.
4) ակադեմիական կազմի որակավորման ներքին պահանջների հաստատումը և պաշտոնների համալրման մրցութային ընթացակարգերի պահանջների հաստատումը.
5) իրականացվող հետազոտությունների կամ մշակումների որակի և մակարդակի քննարկումը և առաջարկությունների ներկայացում ռեկտորին ու հոգաբարձուների խորհրդին.
6) կրթական ծրագրերի որակի քննարկումը և դրանց վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը ռեկտորին.
7) Համալսարանի ակադեմիական կազմի ներգրավմամբ գիտաժողովների կամ քննարկումների կազմակերպում՝ Համալսարանին առնչվող ավելի լայն հարցերի քննարկման համար.
8) ակադեմիական և պատվավոր կոչումների շնորհումը՝ օրենսդրությամբ և Համալսարանի իրավական ակտերով սահմանված կարգով.
9) հոգաբարձուների խորհրդին Համալսարանի ռազմավարության վերաբերյալ կարծիքի և առաջարկությունների ներկայացումը.
10) Համալսարանի կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու առաջարկություններ ներկայացնելը հոգաբարձուների խորհրդին.
11) ռեկտորի պաշտոնում առաջադրված թեկնածուների համապատասխանության վերաբերյալ եզրակացության ներկայացում հոգաբարձուների խորհրդին.
12) մատուցվող բարձրագույն կրթության որակավորում չշնորհող կրթական ծրագրերի հաստատումը.
13) Համալսարանի ստորաբաժանումների գործունեության կանոնակարգերի հաստատումը.
14) օրենքով և կանոնադրությամբ իրեն վերապահված այլ գործառույթների իրականացնումը:

IX. ՌԵԿՏՈՐԸ

61.Համալսարանի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է ռեկտորը:
62.Համալսարանի ռեկտորի պաշտոնում կարող է ընտրվել այն անձը ՝
1) որն ունի Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան բժշկական բարձրագույն կրթություն.
2) որն ունի գիտական աստիճան և առնվազն տասը տարվա ակադեմիական կամ գիտատեխնոլոգիական գործունեության փորձ, որից առնվազն հինգը կրթության կամ գիտության ոլորտում ղեկավար պաշտոնում.
3) ում 65 տարին նախորդ ռեկտորի պաշտոնավարման ավարտին հաջորդող օրվա դրությամբ չի լրացել.
4) տիրապետում է հայերենին:
63.Համալսարանի ռեկտորն ընտրվում է մրցույթի միջոցով՝ հոգաբարձուների խորհրդի կողմից, գաղտնի քվեարկությամբ, հինգ տարի ժամկետով և հոգաբարձուների խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով:
64. Համալսարանի ռեկտորի հետ աշխատանքային պայմանագիրը ստորագրում է հոգաբարձուների խորհրդի նախագահը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով, հիմնադրի կողմից ընտրության արդյունքները հաստատելուց հետո:
65.Համալսարանի ռեկտորի լիազորությունների ժամկետի ավարտից ոչ պակաս քան վեց և ոչ ավելի, քան տասներկու ամիս առաջ, Հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատած տեքստի հիման վրա Համալսարանի պաշտոնական կայքում հրապարակվում է մրցույթի միջոցով ռեկտորի ընտրության հայտարարությունը: Նոր ընտրված ռեկտորը ստանձնում է իր պարտականությունների կատարումը Համալսարանի գործող ռեկտորի լիազորությունների ժամկետի ավարտի օրը:
66.Ռեկտորի թափուր հաստիք առաջանալու դեպքում հոգաբարձուների խորհուրդը հայտարարում է մրցույթ' համապատասխան հիմքը առաջանալու օրվանից ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում, մրցույթի անցկացման ժամկետի սահմանման հիմք ընդունելով սույն կանոնադրության 65-րդ կետի պահանջները: Ռեկտորի թափուր հաստիք առաջանալու դեպքում մինչև սույն կանոնադրությամբ սահմանված կարգով ռեկտորի ընտրությունը' ռեկտորի պարտականությունների կատարումը հոգաբարձուների խորհրդի որոշմամբ դրվում է ուսումնական աշխատանքների գծով կամ այլ պրոռեկտորներից մեկի վրա:
67.Նոր ընտրված ռեկտորը ստանձնում է իր պարտականությունների կատարումը Համալսարանի գործող ռեկտորի լիազորությունների ժամկետի ավարտի օրը:
68. Համալսարանի ռեկտորը իր առաջադրման ժամանակ և պաշտոնավարման ընթացքում չի կարող լինել որևէ կուսակցության անդամ, պարտավոր է դրսևորել քաղաքական զսպվածություն և չեզոքություն:
69.Համալսարանի ռեկտորի լիազորությունները սահմանվում են օրենքով, սույն կանոնադրությամբ և նրա հետ կնքված աշխատանքային պայմանագրով:
70.Ռեկտորի լիազորություններին են պատկանում'
1) Համալսարանի ընթացիկ կառավարումը և Համալսարանի անունից հանդես գալը և այն ներկայացնելը.
2) իր իրավասության սահմաններում հրամանների ընդունումը, ցուցումներ,

հանձնարարականներ տալը և դրանց կատարման վերահսկումը.
3) աշխատանքային պայմանագրերի կնքումը, աշխատանքային պայմանագրերի լուծումը և օրենսդրությամբ գործատուին վերապահված այլ գործառույթների իրականացումը.
4) Համալսարանի կրթական, գիտական, կլինիկական, տնտեսական, ֆինանսական, միջազգային և այլ գործունեության ղեկավարումը.
5) Համալսարանի ակադեմիական խորհրդի նախագահումը, կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքների կազմակերպումը՝ ապահովելով դրանց բնականոն և համակարգված գործունեությունը.
6) Համալսարանի ռազմավարական ծրագրի ներկայացումը հոգաբարձուների խորհրդի հաստատմանը.
7) կրթական ծրագրերի վճարների մասին առաջարկություն ներկայացնելը հոգաբարձուների խորհրդին.
8) Համալսարանի բյուջեի, Համալսարանի կառուցվածքի, հաստիքակազմերի (պաշտոնների ցանկեր), դրանց ներկայացվող պահանջների, հաստիքացուցակի դրանցում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին առաջարկությունների ներկայացումը հոգաբարձուների խորհրդին.
9) Համալսարանի գործունեության մասին տարեկան հաշվետվության ներկայացումը հոգաբարձուների խորհրդին և ակադեմիական կազմին.
10) Համալսարանի կանոնադրության և օրենսդրության համաձայն, սովորողներին ընդունելն ու ազատելը, տեղափոխելը, վերականգնելը.
11) օրենքով, սույն կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով նախատեսված այլ լիազորությունների իրականացում:
71.Ռեկտորը պատասխանատու է Համալսարանի ֆինանսական գործունեության և պատշաճ կառավարման համար, ինչպես նաև ֆոնդերի և այլ գույքի համար:
72. Ռեկտորի հետ պայմանագիրը լուծվում է Հոգաբարձուների խորհրդի ընդհանուր թվի երկու երրորդի կողմից ռեկտորի հաշվետվությունը չընդունելու պարագայում կամ ռեկտորին ներկայացվող պահանջների նկատմամբ անհամապատասխանություն առաջանալու պարագայում:
73.Ռեկտորի պաշտոնում չի կարող նշանակվել այն անձը՝
1) որը դատապարտվել է հանցագործության կատարման համար և նրա դատվածությունը մարված կամ հանված չէ կամ
2) որին, օրենքի համաձայն, արգելվել է ղեկավար պաշտոններ զբաղեցնել կամ
3) որը նախընթաց երեք տարիների ընթացքում եղել է սնանկանալու պատճառով լուծարված և իրենց պարտատերերի օրինական պահանջները չբավարարած կազմակերպության ղեկավար կամ
4) որը հանդիսանում է քաղաքական կուսակցության անդամ:
74.Ընտրության արդյունքում ռեկտորի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցվում են հոգաբարձուների խորհրդի որոշմամբ, եթե առկա է ստորև նշված հանգամանքներից որևէ մեկը.
1) նա դիմում է այդ մասին կամ
2) լրացել է նրա 65 տարին կամ

3) նա իր գրավոր համաձայնությամբ ընտրվել կամ նշանակվել է այլ պաշտոնում կամ անցել է իր պաշտոնի հետ անհամատեղելի այլ աշխատանքի կամ
4) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով նա ավելի քան չորս ամիս անընդմեջ չի ներկայացել աշխատանքի կամ
5) նա ավելի քան երեք օր անընդմեջ անհարգելի պատճառներով չի ներկայացել աշխատանքի կամ
6) նշանակվել է օրենքի պահանջների խախտմամբ, կամ առաջ են եկել սույն կանոնադրության 73-րդ կետով սահմանված հանգամանքներից մեկը կամ
7) նա իր լիազորություններն իրականացնելիս Համալսարանին իր մեղքով հասցրել է վնաս, որի գումարը գերազանցում է Համալսարանի տարեկան բյուջեի հինգ տոկոսը կամ
8) դատարանի' օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա նա ճանաչվել է անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած.
9) օրինական ուժի մեջ է մտել նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը կամ
10) մեկ տարվա ընթացքում օրենքի խախտման համար ենթարկվել է կրկնակի կարգապահական պատասխանատվության կամ
11) առաջացել է օրենքով նախատեսված այլ հանգամանք:
75. Համալսարանի ռեկտորն ունի տեղակալներ՝ պրոռեկտորներ, որոնք՝
1) իրականացնում են իրենց ռեկտորի կողմից իրենց համակարգմանը հանձնարարված ոլորտի աշխատանքները, դրանց կապակցությամբ սահմանում հանձնարարականներ և առաջադրանքներ, հսկում դրանց կատարումը.
2) կազմակերպում իրենց համակարգման ներքո գործող ստորաբաժանումների աշխատանքները.
3) մշակում և ներկայացնում են իրենց համակարգմանը վերապահված ոլորտներում զարգացման, բարեփոխման ծրագրերի նախագծեր.
4) ռեկտորի հաձնարարությամբ ժամանակավորապես (ռեկտորի ժամանակավոր անաշխատունակության, արձակուրդի, գործուղման դեպքերում) կատարում են նրա պարտականությունները.
5) իրականացնում սույն կանոնադրությամբ, Համալսարանի իրավական ակտերով և կնքված աշխատանքային պայմանագրով նախատեսված այլ աշխատանքներ:
76. Պրոռեկտորներն իրավունք ունեն՝
1) իրենց լիազորությունների շրջանակում տալ պարտադիր կատարման ենթակա հանձնարարականներ, ցուցումներ ֆակուլտետների դեկաններին, ամբիոնի վարիչներին և այլ ստորաբաժանումների ղեկավարներին,
2) ռեկտորի հանձնարարությամբ Համալսարանը ներկայացնել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, այլ կազմակերպությունների հետ հարաբերություններում,
3) ներկայացնել առաջարկություններ աշխատողներին խրախուսելու կամ կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ:
4) հետևել ռեկտորի հանձնարարականների պատշաճ և ժամանակին կատարմանը,
5) ռեկտորի բացակայության ժամանակ, վերջինիս հրամանով և իրենց պաշտոնների անձնագրերով սահմանված կարգով ժամանակավորապես իրականացնել ռեկտորի պարտականությունները:

6) օգտվել իրենց աշխատանքային պայմանագրով, պաշտոնի անձնագրով, Համալսարանի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներից:
77. Պրոռեկտորների պարտականություններն են՝
1) ապահովել իրենց համակարգման ոլորտին առնչվող՝ Համալսարանի զարգացման ռազմավարական ծրագրի մշակման, կատարման ուղղությամբ աշխատանքները,
2) հետևել կրթական չափորոշիչների պահպանմանը և ուսումնական գործընթացի որակին,
3) սահմանված ժամկետներում ռեկտորին և ակադեմիական խորհրդին ներկայացնել հաշվետվություններ իրենց համակարգման ոլորտին առչվող աշխատանքների կատարման կամ ծրագրերի իրականացման վերաբերյալ,
4) պահպանել ակադեմիական էթիկայի կանոնները և նպաստել Համալսարանում բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորմանը:
5) սահմանված կարգով ուսանողների և դասախոսների կողմից բարձրացրած հարցերին տալ համապատասխան լուծումներ,
6) չհրապարակել իրենց հայտնի դարձած առևտրային, բժշկական, ծառայողական այլ գաղտնիք պարունակող տեղեկությունները,
7) կատարել ՀՀ օրենսդրությամբ և Համալսարանի ներքին իրավական ակտերով ու ռեկտորի հրամաններով ու հանձնարարականներով, իրենց աշխատանքային պայմանագրով սահմանված այլ պարտականություններ:

78.Ռեկտորը օրենքով և սույն կանոնադրությամբ վերապահված իր լիազորությունները իրականացնելու համար կարող է ունենալ գլխավոր խորհրդականներ, խորհրդականներ և օգնականներ:

X. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ ԱՆԿԱԽ ՄԱՐՄԻՆԸ

79.Համալսարանում գործում է ընտրական անկախ մարմին, որը պատասխանատու է Համալսարանի ընտրական գործընթացների կազմակերպման և դրանց ժողովրդավարական ու մասնակցային պատշաճ մակարդակով իրականացման համար:
80.Ընտրական անկախ մարմինը գործում է մշտական հիմունքներով:
81. Ընտրական անկախ մարմնի անդամների թիվը հինգն է՝ ներառյալ մարմնի ղեկավարը:
82.Ընտրական անկախ մարմնի անդամների չորսի թեկնածություններն առաջադրում է ռեկտորը, մեկինը՝ ուսանողական ինքնակառավարման մարմինը: Համալսարանի ռեկտորի կողմից առաջադրված թեկնածուները ներկայացվում են հոգաբարձուների խորհրդի հաստատմանը: Հոգաբարձուների խորհրդի ընդհանուր թվի ձայների մեծամասնության կողմից հաստատելվելու դեպքում, նրանք ռեկտորի հրամանով նշանակվում են համապատասխանաբար ընտրական անկախ մարմնի անդամ:
83.Ընտրական անկախ մարմինը կազմակերպում է Համալսարանի հետևյալ ընտրությունները՝
1) հոգաբարձուների խորհրդի անդամների ակադեմիական կազմից և ուսանողության ներկայացուցիչական մարմնից թեկնածուների ընտրությունը.
2) ռեկտորի ընտրությունը.
3) ակադեմիական խորհրդի ակադեմիական կազմի և ուսանողության ներկայացուցիչների

ընտրությունը.
4) Համալսարանի ակադեմիական ստորաբաժանումների ղեկավարների և ակադեմիական կազմի պաշտոնների ընտրությունները.
5) էթիկայի և իրավունքի պաշտպանության գրասենյակի ղեկավարի ընտրությունը.
6) ուսանողական ներկայացուցչական մարմնի ընտրությունը:
84.Ընտրական անկախ մարմինը՝
1) կազմակերպում է ընտրությունների անցկացման մասին անհրաժեշտ հայտարարությունների հրապարակման հետ կապված աշխատանքները.
2) իրականացնում է թեկնածուների փաստաթղթերի ընդունումը, թեկնածուների ընտրություններին մասնակցության թույլատրման կամ մերժման մասին որոշման ընդունումը, քվեաթերթիկների տպումը, ստորագրումը, կնքումը, քվեարկության կազմակերպումը, քվեների հաշվարկը, քվեարկությանը արդյունքների ամփոփումը, արձանագրությունների կազմումը, , ընտրությունների արդյունքների հրաապարակումը.
3) Ընտրական անկախ մարմնի կանոնակարգով նախատեսված ընթացիկ աշխատանքների իրականացումը:
85.Ընտրական անկախ մարմնի կանոնակագը և Համալսարանում ընտրությունների կազմակերպման և անցկացման կարգը սահմանում է հոգաբարձուների խորհուրդը:

XI. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ՀԱՍՏԻՔԱԿԱԶՄԵՐԸ (ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԿԱԶՄԵՐԸ)

86.Համալսարանի կառուցվածքի մեջ կարող են ներառվել հետևյալ ստորաբաժանումները ՝
1) ակադեմիական միավորներ՝ ֆակուլտետներ, դպրոցներ, ամբիոններ
2) կրթական կենտրոններ, գիտական կենտրոններ (գիտական խմբեր), լաբորատորիաներ.
3) հանրակրթական ավագ դպրոց, քոլեջ.
4) հիվանդանոցային համալիրներ՝ ներառյալ պոլիկլինիկաներ, ստոմատոլոգիական կենտրոններ, լաբորատորիաներ, ինչպես նաև դեղատներ.
5) այլ ստորաբաժանումներ՝ կրթական խմբեր, կենտրոններ, կուրսեր, խմբեր՝ ուղղված Համալսարանի բնականոն և արդյունավետ գործունեություն ապահովմանը:
87.Համալսարանում սահմանվում են վարչական, կազմակերպական, հայեցողական, ակադեմիական, գիտական և ճարտարագիտատեխնիկական ինչպես նաև օժանդակ, արտադրական և այլ հաստիքակազմեր (պաշտոնների կազմեր): Վարչական, կազմակերպական, հայեցողական, ակադեմիական, գիտական և ճարտարագիտատեխնիկական, ինչպես նաև օժանդակ և այլ կազմի աշխատողներին օրենդրության, սույն կանոնադրության և Համալսարանի ակտերին համապատասխան աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Համալսարանի ռեկտորը:

XII. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ԵՎ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՃԱՐԱՏԱՐԱԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՍՏԻՔԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ

88.Համալսարանի ֆակուլտետները հանդիսանում են բարձրագույն կրթական ծրագրեր իրականացնող առաջնային ակադեմիական միավորներ, որոնք պատասխանատու են ակադեմիական բնագավառում կրթության և հետազոտական աշխատանքների իրականացման համար և բարձրագույն կրթության բոլոր մակարդակներում կրթության որակի համար:

89.Ֆակուլտետի ղեկավարում է դեկանը և ֆակուլտետում գործում է ֆակուլտետային խորհուրդը:

90. Ֆակուլտետի խորհուրդը կազմավորվում է՝ ֆակուլտետի կանոնակարգով սահմանված կարգով՝ հինգ տարի ժամկետով:

91. Ֆակուլտետի խորհուրդը՝

1) հավանություն է տալիս ֆակուլտետի կանոնակարգին և այն ներկայացնում ակադեմիական խորհրդի հաստատմանը.

2) լսում է դեկանի ամենամյա հաշվետվությունները և գնահատում նրա գործունեությունը.

3) լքննարկում է ֆակուլտետի ուսումնական, գիտական աշխատանքների և այլ հարցերը.

4) քննարկում է ֆակուլտետի ուսումնամեթոդական և հետազոտական գործունեության հետ կապված այլ հարցեր.

5) իրականացնում իր գործունեության կանոնակարգով, Համալսարանի ակտերով նախատեսված այլ աշխատանքներ:

92. Ֆակուլտետի գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է ֆակուլտետի դեկանը՝ իր իրավասությունների սահմաններում՝ ֆակուլտետի կանոնակարգին և սույն կանոնադրությանը համապատասխան:

93.Ֆակուլտետի դեկանն ընտրվում է Համալսարանի ակադեմիական խորհրդում՝ փակ քվեարկությամբ: Ընտրությունների արդյունքների հիման վրա ընտրված դեկանին պաշտոնի է նշանակում Համալսարանի ռեկտորը և սահմանված կարգով կնքում է պայմանագիր 5 տարի ժամկետով: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել ֆակուլտետի դեկանի պաշտոնում, այդ թվում կառուցվածքային փոփոխության դեպքում:

94. Դեկանի թեկնածուին ներկայացվող պահանջները սահմանվում են և նրա ընտրությունը կազմակերպվում է Համալսարանում ընտրությունների կազմակերպման և անցկացման կարգին համապատասխան**:**

95. Ֆակուլտետի դեկանը՝

1) կազմակերպում է ֆակուլտետի ուսումնակամեթոդական գործունեությունը.

2) ապահովում է համալսարանի իրավական ակտերի և ֆակուլտետի խորհրդի որոշումների կատարումը.

3) ռեկտորի հաստատմանն է ներկայացնում դեկանի տեղակալների և ֆակուլտետի խորհրդի քարտուղարի թեկնածությունները՝ համաձայնեցնելով ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի հետ:

4) իրականացնում է ֆակուլտետի գործունեության կանոնակարգով և Համալսարանի իրավական ակտերով նախատեսված այլ գործառույթներ:

96. Ռազմաբժշկական ֆակուլտետը, որը միաժամանակ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության բարձրագույն ռազմաուսումնական ստորաբաժանում է, ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

97.Ռազմաբժշկական ֆակուլտետը Հայաստանի Հանրապետության զինված ուժերի համար պատրաստում է ռազմաբժշկական բարձրագույն կրթությամբ սպաներ, կազմակերպում հետավարտական կրթությունը, պատրաստում ֆակուլտետի համար ակադեմիական կադրեր և կազմակերպում հետազոտական աշխատանքները: Ֆակուլտետի կառավարման մարմիններն են ֆակուլտետի խորհուրդը և ֆակուլտետի պետը: Ռազմաբժշկական ֆակուլտետի պետի պաշտոնը զինվորական պաշտոն է, որում նշանակումը կատարվում է «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքով սահմանված կարգով: Ռազմաբժշկական ֆակուլտետի պետը ունի օրենքով, սույն կանոնադրության 95-րդ կետով և ռազմաբժշկական ֆակուլտետի կանոնադրությամբ սահմանված գործառույթներ:

98. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարը՝

1) ռեկտորի հետ համատեղ հաստատում է ռազմաբժշկական ֆակուլտետի հաստիքացուցակը, ռազմաբժշկական և զինվորական պատրաստության ավարտական ու պետական քննական հանձնաժողովների կազմերը.

2) իրականացնում է ֆակուլտետի կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

99.Համալսարանի ամբիոնը գործում է համապատասխան ֆակուլտետի հսկողության ներքո: Համալսարանի ամբիոնը իրավասու է՝

1)իր մասնագիտական ուղղվածության շրջանակում մշակել կրթական ծրագրերի նախագծեր, իրականացնել առարկայական ծրագրերի կառավարում.

2) մշակել ակադեմիական մոդուլներ.

3) մշակել անհրաժեշտ ուսումնական, ուսումնամեթոդական, գիտական և այլ գրականություն ու ձեռնարկներ.

4)ուսումնասիրել և համապատասխանաբար ներդնել հայաստանյան, օտարերկրյա առաջատար մասնագետների փորձը, հետազոտություններն ու ուսումնասիրությունները.

5)պայմաններ ստեղծել և նպաստել ամբիոնի սկսնակ ակադեմիական կազմի մասնագիտական զարգացման, դասախոսական հմտությունների յուրացման աշխատանքներում.

6) իրականացնել Համալսարանի ակտերով նախատեսված այլ աշխատանքներ:

100. Ամբիոնը ղեկավարում է վարիչը, որն ընտրվում է Համալսարանի ակադեմիական խորհրդում՝ փակ գաղտնի քվեարկությամբ: Ընտրությունների արդյունքների հիման վրա ընտրված ամբիոնի վարիչին պաշտոնի է նշանակում Համալսարանի ռեկտորը և սահմանված կարգով կնքում է պայմանագիր՝ 5 տարի ժամկետով: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել ամբիոնի վարիչի պաշտոնում, այդ թվում կառուցվածքային փոփոխության դեպքում:

101. Ամբիոնի վարիչի թեկնածուներին ներկայացվող պահանջները սահմանվում և ընտրությունը կազմակերպվում է Համալսարանում ընտրությունների կազմակերպման և անցկացման կարգին համապատասխան: Ամբիոնի վարիչը կազմակերպում ամբիոնի աշխատանքները, ղեկավարում դրանք, վարում նիստեր, խորհրդակցություններ, իրականացնում ուսումնական ծանրաբեռնվածության բաշխմանն ուղղված աշխատանքներ և Համալսարանի իրավական ակտերով նախատեսված այլ գործառույթներ:

102.Սույն կանոնադրության 86-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված ակադեմիական միավորների ղեկավար պաշտոնների աշխատանքը համարվում է ակադեմիական

աշխատանք: Ակադեմիական միավորների ղեկավարների և տեղակալների պաշտոններում ընտրված անձի լիազորությունները դադարեցվում են ռեկտորի որոշմամբ, եթե լրացել է նրա 65 տարին:

103.Համալսարանի ակադեմիական, գիտական և ճարտարագիտատեխնիկական կազմի տարակարգերը սահմանվում են օրենսդրության համաձայն, իսկ նրանց ատեստավորման կարգը, սահմանվոմ են օրենսդրությամբ և Համալսարանի իրավական ակտերով սահմանված կարգով:

104.Համալսարանում ակադեմիական կազմի թափուր պաշտոնների տեղակալումն իրականացվում է Ընտրական անկախ մարմնի կողմից Համալսարանում ընտրությունների կազմակերպման և անցկացման կարգի համաձայն, մրցութային եղանակով՝ երեքից հինգ տարի ժամկետով: Ակադեմիական կազմի գործունեության արդյունքների գնահատման հիման վրա նրանց հետ աշխատանքային հարաբերությունները կարող են շարունակվել հինգ տարի ժամկետով՝ առանց մրցութային ընտրության: Մրցույթի արդյունքով ակադեմիական կազմի թափուր պաշտոնը չհամալրվելու դեպքում Համալսարանի ռեկտորը ակադեմիական միավորի և կրթական ծրագրի ղեկավարի առաջարկությամբ կարող է պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջներին բավարարող անձի հետ կնքել աշխատանքային պայմանագիր, բայց ոչ ավել, քան մեկ տարի ժամկետով:

105.Համալսարանը, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված պայմանագրի հիման վրա, կարող են ներգրավել նաև հրավիրյալ ակադեմիական կազմ կամ հետազոտողների՝ որոշակի սահմանված ժամկետում դասախոսություն կարդալու կամ մասնագիտական ոլորտում հետազոտություն իրականացնելու համար՝ ինչի հիմք է հանդիսանում հետազոտության ոլորտում վերջինիս ձեռքբերումները:

XII. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՅԼ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ

106.Համալսարանի այլ ստորաբաժանումները իրենց գործունեությունը իրականացնում են աշխատանքային օրենսդրության, ոլորտային օրենսդրության, սույն կանոնադրության, Համալսարանի իրավական ակտերին համապատասխան:

107.Համալսարանի այլ ստորաբաժանումները ստեղծվում են Համալսարանի ընթացիկ գործունեությունը բնականոն ապահովելու, Համալսարանի նպատակների, գործառույթների, պարտականությունների պատշաճ իրականացման համար: Դրանց գործունեության կանոնակարգերը հաստատվում են ակադեմիական խորհրդի կողմից:

108.Հիվանդանոցային համալիրները և դրանց բուժաշխատողները իրենց գործունեությունը իրականացնում են սույն կանոնադրության 106-րդ կետի համաձայն՝ առողջապահության ոլորտը կարգավորող օրենսդրությանը համապատասխան:

109.Համալսարանի «Հերացի» ավագ դպրոցի աշխատողները իրենց գործունեությունը իրականացնում են սույն կանոնադրության 106-րդ կետի համաձայն՝ հանրակրթության ոլորտը կարգավորող օրենսդրության համապատասխան:

110.Համալսարանի քոլեջի աշխատողները իրենց գործունեությունը իրականացնում են սույն կանոնադրության 106-րդ կետի համաձայն՝ մասնագիտական կրթության և ուսուցման կրթության ոլորտը կարգավորող օրենդրության համաձայն:
111.Համալսարանի վարչական պաշտոններում աշխատանքի ընդունման (ընտրության) առաջխաղացման և վերանշանակման չափանիշներն ու պայմանները, իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են ռեկտորի կողմից: Վարչական պաշտոններում նշանակված (ընտրված) անձանց լիազորությունները դադարեցվում են ռեկտորի որոշմամբ, եթե լրացել է նրանց 65 տարին:
112.Համալսարանում վարչական պաշտոն զբաղեցնող անձինք կարող են համատեղությամբ իրականացնել նաև ակադեմիական աշխատանք' իրենց մասնագիտության և որակավորման համապատասխան: Վարչական պաշտոն զբաղեցնող անձը Համալսարանում չի կարող զբաղեցնել այլ վարչական պաշտոն, բացառությամբ հոգաբարձուների խորհրդի կամ ակադեմիական խորհրդի անդամ լինելուց:

XIV. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԸ, ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆԸ

113.Համալսարանի սովորողներ են համարվում աշակերտները, ուսանողները, կլինիկական ռեզիդենտները, նեղ և լրացուցիչ մասնագիտացում և շարունակական մասնագիտական զարգացում անցնող անձինք:
114 Հերացի» ավագ դպրոցում և քոլեջում սովորողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են տվյալ ոլորտը կարգավորող օրենսդրությամբ, Համալսարանի իրավական ակտերով:
115.Կլինիկական ռեզիդենտների, նեղ և լրացուցիչ մասնագիտացում անցնողների, շարունակական մասնագիտական զարգացում անցնողների իրավունքները և պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Համալսարանի իրավական ակտերով:
116. Ուսանողն իրավունք ունի'
1) իր հայեցողությամբ ընտրել կրթական ծրագիրը, սովորելու իր ընտրած և ընդունված կրթական ծրագրով.սահմանված կարգով զբաղվել հետազոտություններով, ցանկացած կրթական մակարդակում ընդհատել կամ շարունակել բարձրագույն կրթությունը' օրենքով, Համալսարանի կանոնադրության և Համալսարանի իրավական ակտերին համախատասխան;
2) ակադեմիական խորհրդի սահմանած կարգով կազմելու ուսուցման անհատական պլան' ընտրելով տվյալ կրթական ծրագրով նախատեսված դասընթացները կամ ակադեմիական մոդուլները սահմանված դեպքում' պահպանելով դրանց մուտքային պայմանները, ինչպես նաև գրանցվելու ցանկացած այլ ուսումնական մոդուլի, որը դասավանդվում է Համալսարանում.
3) ստանալու կրթության անհատական կազմակերպմանն ուղղված խորհրդատվություն ակադեմիական խորհրդի կողմից սահմանված կարգով առաջարկված և ուսանողի կողմից ընտրված Համալսարանի աշխատողի կողմից.

4) ոչ կարգավորվող մասնագիտությունների դեպքում առաջարկելու ավարտական աշխատանքի թեման կամ ընտրելու առաջարկվող թեմաներից.
5) անվճար օգտվելու Համալսարանի գրադարանից՝ ներգրավվելով հետազոտական խմբերի աշխատանքներին.
6) դիմելու Համալսարանին և սահմանված կարգով ստանալու խորհրդատվություն՝ կրթության ընթացքում առաջ եկած խնդիրների լուծման համար.
7) օգտվելու կրթաթոշակ ստանալու իրավունքից՝ օրենսդրությամբ կամ Համալսարանի իրավական սահմանված կարգով.
8) սահմանած կարգով ստանալու ակադեմիական արձակուրդ մինչև մեկ տարի ժամկետով.
9) մեկ ուսումնական տարվա ընթացքում ոչ պակաս, քան երկու անգամ, գտնվելու արձակուրդում.
10) կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգի հետ համադրելիության ապահովման պարագայում սահմանված կարգով տեղափոխվելու այլ բուհ կամ այլ կրթական ծրագիր՝ ուսումնառության առանձին փուլեր կամ ուսումնառությունն ամբողջությամբ իրականացնելու նպատակով (ներառյալ օտարերկրյա պետությունների բուհերում).
11) ազատորեն արտահայտելու իր մտքերն ու կարծիքը.
12) իր ոաումնառած կրթական ծրագրերից որևէ մեկի դադարեցման դեպքում Լիազոր մարմնի սահմանված կարգով շարունակելու ուսումնառությունը Համալսարանի մեկ այլ կրթական ծրագրով.
13) սույն կանոնադրությամբ նախատեսված կարգով մասնակցելու Համալսարանի կառավարման մարմինների աշխատանքներին.
14) գնահատելու Համալսարանի ակադեմիական կազմի աշխատանքի և առաջարկվող դասընթացների որակը.
15) մասնակցելու Համալսարանում գործող մարզական ակումբների գործունեությանը և Համալսարանի կանոնադրության և օրենսդրության համաձայն կուտակելու կրեդիտներ ուսանողական մարզական գործունեությունից.
16) նախաձեռնելու և ստեղծելու ուսանողական կառույցներ, միավորումներ՝ ուսանողական ինքնակառավարման մարմիններ, ընդգրկվելու և անդամակցելու դրանց ու հանդես գալու նախաձեռնություններով, ծրագրերով, մասնակցելու կամավորական աշխատանքների.
17) պահանջելու և ստանալու խելամիտ հարմարեցումներ՝ օրենսդրությամբ սահմանված կարգով.
18) անկախ ընդհատման պատճառից և ժամկետից, իրավունք ունի ակադեմիական խորհրդի կողմից սահմանված կարգով և դեպքերում վերականգնելու ուսանողի իր կարգավիճակը, սահմանված կարգով՝ կրթական ծրագրի փոփոխությամբ պայմանավորված լրացնելով նաև որոշակի կրեդիտներ.
18) ձևավորել մարզական ակումբներ և մասնակցել համապատասխան մարզաձևերի ուսանողական մրցաշարերի:
117. Ուսանողը պարտավոր է՝
1) իր կարողությունները ներդնելու սովորելու և մասնագիտական առաջընթացի համար.
2) կատարել Համալսարանի կանոնադրությամբ, ներքին կարգապահական կանոններով, Համալսարանի այլ ակտերով, ինչպես նաև կրթական ծառայությունների մատուցման

պայմանագրով սահմանված պարտականությունները.
3) պահպանել Համալսարանի կողմից սահմանված ակադեմիական բարեվարքության և էթիկայի կանոնակարգի պահանջները:
118.Ուսանողը ունի օրենքով, սույն կանոնադրությամբ կանոնադրությամբ և կրթական ծառայությունների մատուցման նախատեսված այլ իրավունքներ և պարտականություններ:
119.Սույն կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով նախատեսված պարտականությունների խախտման դեպքում ուսանողի նկատմամբ կարող են կիրառվել նշված իրավական ակտերով նախատեսված կարգապահական տույժեր՝ ընդհուպ Համալսարանից հեռացում:
120. Ուսանողն ունի իր անհատական թվանիշային տիրույթը բարձրագույն կրթության և գիտության կառավարման համակարգում, որի միջոցով հետևում է իր առաջընթացին, տեսնում է իր կուտակած կրեդիտները, ինչպես նաև օգտվում է իրեն հասանելիք արտոնություններից ինչպես նաև ունենում է հասանելիություն իր փաստաթղթերին:
121.Համալսարանում կարող են գործել ուսանողական ինքնակառավարման մարմիններ, որոնց ձևավորման կարգը հաստատում է հոգաբարձուների խորհուրդը:
122.Համալսարանում գործում է ուսանողական ներկայացուցչական մարմին, որը ձևավորվում է ընտրական անկախ մարմնի կողմից կազմակերպված ընտրությունների միջոցով, ուսանողներից՝ Համալսարանում ընտրությունների կազմակերպման և անցկացման կարգին համապատասխան:
123. Ուսանողական ներկայացուցչական մարմնի գործունեության շրջանակն ընդգրկում է՝
1) ոսանողների իրավունքները և օրինական շահերի ներկայացումը և պաշտպանությունը.
2) Համալսարանի կառավարմանը ուսանողների մասնակցությունը և ուսանողության շահերի առաջմղումը այդ մարմիններում.
3) իր աշխատակարգով նախատեսված այլ գործառույթներ:
124.Ուսանողական ներկայացուցչական մարմինը պարտավոր է՝
1) ունենալ կազմակերպական հստակ կառուցվածք.
2) ունենալ իր գործունեության հստակ ոլորտներ և չշեղվել ուսանողների լավագույն շահերը ներկայացնելու իր առաքելությունից.
3) ներկայացնել ուսանողական լայն համայնքը՝ ապահովելով ներկայացուցչականությունը և ներառականությունը.
3) ձևավորվել ժողովրդավարական սկզբունքներով, Համալսարանի ուսանողների ընտրությամբ՝ ընտրողների մասնակցության առնվազն 40 տոկոսի պայմանով, այդ թվում՝ համապատասխան էլեկտրոնային քվեարկության գործիքների կիրառմամբ.
4) ապահովել հաշվետվողականությունը Համալսարանի սովորողներին՝ պարբերական համաժողովների ինչպես նաև այլ հարթակների միջոցով.
5) ապահովել աշխատանքի փոխանցելիությունը՝ վարելով համապատասխան գործավարություն.
6) ենթարկվել ուսանողական համակազմի՝ քվեարկության միջոցով կայացրած որոշումներին.
7) ներկայացուցիչների միջոցով բարեխղճորեն մասնակցել Համալսարանի կառավարման մարմինների աշխատանքներին:

125.Սույն կանոնադրության 124-րդ կետով սահմանված պարտավորությունների չկատարման հանգամանքի առաջանալու պարագայում հոգաբարձուների խորհրդի որոշմամբ նշանակվում են Համալսարանի ուսանողական ներկայացուցչական մարմնի նոր ընտրություններ:
126. Ուսանողական ներկայացուցչական մարմնի կառուցվածքը և աշխատակարգը հաստատվում է Ուսանողական ներկայացուցչական մարմնի կողմից:
127. Արգելվում է ուսանողական ինքնակառավարման մարմինների գործունեության ֆինանսավորման կամ գործունեության համար Համալսարանի տրամադրած միջոցներից բացի այլ միջոցների ներգրավելը:
128. Ուսանողական ինքնակառավարման մարմինները իրավասու են Համալսարանի կառավարման բոլոր մարմիններից ստանալ տեղեկատվություն կրթության կազմակերպմանն առնչվող բոլոր հարցերի վերաբերյալ:

XV. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ, ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

129. Համալսարանում իրականացվում են հանրակրթական, միջին մասնագիտական, բարձրագույն կրթության առաջին, երկրորդ (ներառյալ հետավարտական ուսումնառության), երրորդ մակարդակի կրթական ծրագրեր, լրացուցիչ և նեղ մասնագիտացումների, շարունակական մասնագիտացման զարգացման ծրագրեր:
130.Համալսարանի «Հերացի» ավագ դպրոցում ուսուցումն իրականացվում է հանրակրթական ծրագրերով՝ հանրակրթության ոլորտը կարգավորող օրենսդրության համաձայն:
131.Համալսարանի քոլեջում ուսուցումն իրականացվում է միջին մասնագիտական կրթական ծրագրերով՝ մասնագիտական կրթության և ուսուցման կրթության ոլորտը կարգավորող օրենդրությանը համաձայն:
132. Համալսարանի ընդհանուր բժշկության, ռազմաբժշկական և ստոմատոլոգիական ֆակուլտետներում կրթությունն իրականացվում է անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով: Դեղագիտական ֆակուլտետում կրթությունն իրականացվում է բակալավրիատում և մագիստրատուրայում: Հանրային առողջության ֆակուլտետում կրթությունն իրականացվում է մագիստրատուրայում:
133. Համալսարանում հետավարտական ուսումնառությունն իրականացվում է կլինիկական ռեզիդենտուրայում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:
134.Համալսարանում բարձրագույն կրթության երրորդ մակարդակի կրթությունն իրականացվում է դոկտորանտուրայում՝ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:
135. Համալսարանում օտարերկրացիների կրթությունն իրականացում է «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի համաձայն:

136.Համալսարանը կրթական ծրագրերի ուսուցման ուղղորդիչներին համապատասխան մշակում է կրթական ծրագրերը, որոնք ենթակա են լիցենզավորման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
137. Համալսարանում, ըստ մասնագիտությունների, երաշխավորում է կրթության տարբեր մակարդակներում ուսանողների ուսումնառության գործընթացը (մուտքը կրթական ծրագիր և ելքը ծրագրից)՝ ապահովելով ակադեմիական կրեդիտների կուտակումը, փոխանցումը և որակավորման աստիճանների շնորհումը:
138. Համալսարանի ուսանողներին և կլինիկական ռեզիդենտներին, ովքեր կատարել են ուսուցման պլանի պահանջները, թույլատրվում է մասնակցել ամփոփիչ ատեստավորմանը:
139.Համալսարանի բարձրագույն կրթության՝
1) առաջին և երկրորդ մակարդակներում ուսումնառությունն ավարտվում է ամփոփիչ ատեստավորմամբ և ուսումնառությունը հաջողությամբ ավարտած անձանց օրենսդրությամբ սահմանված կարգով շնորհվում է համապատասխան որակավորում.
2) երրորդ մակարդակում ուսումնառությունն ավարտվում է և հետազոտական աշխատանքը ամփոփվում են դոկտորական ատենախոսության պաշտպանությամբ, որի արդյունքում անձին շնորհվում է դոկտորի գիտական աստիճան' Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության մասնագիտությունների և որակավորումների ցանկի մասնագիտություններով:
140.Բարձրագույն կրթության առաջին և երկրորդ մակարդակների կրթական ծրագրերով, ինչպես նաև ինտեգրված ծրագրով ուսումնառության ավարտին և ամփոփիչ ատեստավորման դրական արդյունքի հիման վրա, անձին տրվում է շնորհված որակավորումը հավաստող դիպլոմ (մասնագիտության և, ըստ անհրաժեշտության, մասնագիտացման նշումով) և հավելված (դիպլոմին կից տրվող համաեվրոպական ձևաչափի փաստաթուղթ):
141.Բարձրագույն կրթության երրորդ մակարդակի ծրագրերով ուսումնառության և հետազոտական աշխատանքի ավարտին' ատենախոսության պաշտպանության արդյունքում անձին շնորհվում է գիտական աստիճանը հավաստող դիպլոմ:
142. Անցումն կրթության մեկ մակարդակից մյուսին կատարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պահանջներին և Համալսարանի իրավական ակտերին համապատասխան:
143. Բարձրագույն կրթության հիմնական կրթական ծրագիրը չավարտած անձանց տրվում է Լիազոր մարմնի կողմից հաստատված նմուշի ակադեմիական տեղեկանք, որը ներառում է տեղեկատվություն ուսումնասիրած դասընթացների ու մոդուլների և կուտակած կրեդիտների վերաբերյալ
144.Կարգավորվող մասնագիտությունների դեպքում' վերականգնվելիս ուսանողի համար սահմանվում են նախկինում հանձնված քննությունների վերահանձնում, ինչպես նաև վերականգնվելու հնարավորության սահմանափակումներ՝ Համալսարանի իրավական ակտերին համապատասխան:
145.Համալսարանը օրենսդրության և իր իրավական ակտերին համապատասխան, ներդնում է որակի ներքին ապահովման համակարգը, որի նպատակն է ապահովել կրթական

ծառայությունների և գիտական հետազոտությունների որակի վերահսկումը և շարունակական բարելավումը
145. Համալսարանի կողմից լրացուցիչ մասնագիտացումների, շարունակական մասնագիտական զարգացման կրթական ծրագրերն իրականացվում են և բարձրագույն կրթության, բնակչության բժշկական օգնության և սպասարկման բանագավառները կարգավորող օրենսդրության պահանջներին համապատասխան:

XVI. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՈՒՅՔԸ ԵՎ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻ ԿԱՊԻՏԱԼԸ

146.Համալսարանի ֆինանսավորման աղբյուրներն են'
1) վճարովի ուսուցման ծառայություններից ստացված եկամուտները Հայաստանի Հանրապետության
2) պետական բյուջեի՝ օրենքով սահմանված ֆինանսավորման ձևերով իրականացվող ֆինանսավորումը.
3) Համալսարանի մասնակցությամբ տնտեսական ընկերության ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները.
4) այլ աղբյուրներից ստացված դրամաշնորհները.
5) գիտական արդյունքի ներդրումից և իրացումից գոյացած միջոցները.
6) ֆիզիկական և իրավաբանական անձանց նվիրատվությունները և նվիրաբերությունները, այդ թվում' հանգանակությունների միջոցով.
7) այլ պետություններից ստացված ֆինանսավորումը.
8) օրենքով չարգելված այլ աղբյուրներից ստացված միջոցները:

147.Համալսարանի հիմնադիրը սույն կանոնադրությամբ սահմանված Համալսարանի գործունեության ապահովման նպատակով Համալսարանին սեփականության կամ անժամկետ օգտագործման (անհատույց) իրավունքով կարող է տրամադրել շենքեր, շինություններ, տրանսպորտային միջոցներ, հողամասեր, սարքավորումներ, ինչպես նաև սպառողական, սոցիալական, մշակութային և այլ նշանակության անհրաժեշտ գույք:
148.Հիմնադրի կողմից Համալսարանին՝ սեփականություն հանձնված գույքը Համալսարանի սեփականությունն է, Համալսարանն այդ գույքն օգտագործում է սույն կանոնադրությամբ սահմանված նպատակների իրականացման համար:
149.Համալսարանին անժամկետ օգտագործման (անհատույց) իրավունքով տրված գույքը չի կարող լինել գրավի առարկա, ինչպես նաև չի կարող փոխանցվել կամ հանձնվել այլ իրավաբանական կամ ֆիզիկական անձանց որպես սեփականություն, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:
150. Համալսարանի սեփական միջոցներով ձեռք բերված գույքը և օրենքով սահմանված այլ աղբյուրներից ձևավորված գույքը Համալսարանի սեփականությունն են:
151.Համալսարանը սեփականության իրավունք ունի ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից Համալսարանին նվիրատվության կամ կտակի ձևով փոխանցված դրամական միջոցների, գույքի և սեփականության այլ օբյեկտների, Համալսարանի գործունեության արդյունք համարվող մտավոր ու ստեղծագործական աշխատանքի

արդյունքների, օրենքով չարգելված այլ աղբյուրների, ինչպես նաև սեփական գործունեությունից ստացված եկամուտների և այդ եկամուտների հաշվին ձեռք բերված գույքի նկատմամբ:

151.Համալսարանի սեփականությունը չի կարող օգտագործվել ի շահ Համալսարանի մարմինների անդամների, ինչպես նաև Համալսարանի աշխատողների՝ բացառությամբ աշխատողների աշխատավարձի և Համալսարանի մարմինների անդամների պարտականությունների կատարմամբ պայմանավորված՝ փոխհատուցման ենթակա ծախսերի, ինչպես նաև այն դեպքերի, երբ Համալսարանի հիմնադիրը, Համալսարանի մարմինների անդամները, ինչպես նաև Համալսարանի աշխատողները կանոնադրությամբ նախատեսված շահառուներ են:

152. Համալսարանը «Հիմնադրամների մասին» օրենքին համապատասխան ձևավորում է անձեռմխելի կապիտալ և հաշվետու տարվա գործունեության արդյունքներով ստացված շահույթի առնվազն 10 տոկոսը ուղղում է Համալսարանի անձեռնմխելի կապիտալի համալրմանը: Հոգաբարձուների խորհրդի որոշմամբ կապիտալի գումարները կարող են ներդրվել պետական պարտատոմսերում կամ առևտրային բանկերում որպես ավանդ, կամ համապատախան ներդրումային ռազմավարության դեպքում՝ այլ տեղերում: Ներդրումներից ստացված եկամուտը Համալսարանը օգտագործում է իր ռազմավարական զարգացման ծրագրի իրականացման կամ կանոնադրական նպատակների համար:

XVII. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

153.Համալսարանի կանոնադրության մեջ փոփոխություններ կարող է իրականացնել Համալսարանի հիմնադիրը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

XVIII.ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

154.Հիմնադրամը կարող է վերակազմակերպվել միայն հիմնադրամի՝ այլ հիմնադրամին միացման կամ այլ հիմնադրամի հետ միաձուլման ձևով:

155.Համալսարանը վերակազմակերպվում է հիմնադրի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով:

156.Համալսարանի լուծարումը նրա գործունեության դադարումն է՝ առանց նրա իրավունքներն ու պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

157. Համալսարանի լուծարման մասին որոշումն ընդունվում է «Բարձրագույն կրթության և գիտության մասին», «Հիմնադրամների մասին» օրենքների համաձայն:

158.Համալսարանը կարող է լուծարվել, եթե՝

1) Համալսարանի գույքը բավարար չէ նրա գործունեության իրականացման համար, և անհրաժեշտ գույք ստանալու հնարավորությունն իրական չէ.

2) իր գործունեությամբ Համալսարանը շեղվել է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակներից.
3) հնարավոր չէ հասնել հհամալսարանի նպատակներին և կատարել այդ նպատակների փոփոխություններ.
4) Համալսարանի գործունեությունը վտանգում է պետական և հասարակական անվտանգությունը, հասարակական կարգը, հանրության առողջությունն ու բարքերը, այլոց իրավունքներն ու ազատությունները.
5) Համալսարանը թույլ է տվել օրենքի բազմակի կամ կոպիտ խախտումներ կամ պարբերաբար իրականացրել է իր կանոնադրական նպատակներին հակասող գործունեություն.
6) Համալսարանը ստեղծելիս հիմնադիրը թույլ է տվել օրենքի էական խախտումներ կամ կեղծիքներ: Էական են համարվում այնպիսի խախտումները, որոնք ի հայտ են եկել հիմնադրամի գրանցումից հետո ևօրենքի համաձայն, հիմնադրամի գրանցումը մերժելու հիմք են հանդիսանում:
159. Պարտատերերի պահանջների բավարարումից հետո, ինչպես նաև այն դեպքում, երբ լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատելու պահին Համալսարանը պարտատերերի նկատմամբ չունի պարտավորություններ, գույքն ուղղվում է Համալսարանի կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ դրա անհնարինության դեպքում փոխանցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

XIX ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

160. Համալսարանի խորհրդանիշի պատկերը և նկարագրությունը. «Հայ մեծ բժշկապետ Մխիթար Հերացու դիմապատկերը շրջանակի մեջ, շրջանագծով գրված հայերենով՝ ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ և անգլերենով՝ YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY AFTER MKHITAR HERATSI: Ներքևի մասում գավաթով օձը բացված գրքի վրա, իսկ ներքևում՝ 1920 տարեթիվը:»